ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան

«06» փետրվար 2023 թ. N 330-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 19-Ի N 1320-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 170-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1574-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 2077-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի ««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1320-Ա հրամանով

հաստատված հավելվածի 18-րդ կետից հետո լրացնել նոր 19-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«19. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-05 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ և «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N LI002971 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LI002971 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ) 1 օր հետո Էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի ««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 170-Ա հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետից հետո լրացնել նոր 20-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«20. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 2-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-04 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ և «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրակայն ՓԲԸ միջև կնքված N LI002971 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LI002971 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ««ԱՐՄ-ԹԵՍՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1574-Ա հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետից հետո լրացնել նոր 15-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 3-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-37 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «ԱՐՄ-ԹԵՍՏ» ՍՊԸ և «ՆԱԻՐԻ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N ԸՊ 002255, մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2024 թվականի հունվարի 18-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության ««Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով

սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 2077-Ա հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետից հետո լրացնել նոր 15-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 4-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-08 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիայի և «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N LI002953 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LI002953 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի հոկտեմբերի 16-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

5. Սույն հրամանի 1-4-րդ կետերով նախատեսված լրացումը գրանցել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124